ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՇՏԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դաշտադեմ համայնք,
հեռ. 077-42-03-09

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊՐ-Ն՝ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 05.05.2016թ թիվ 101/108.5.3/2113-16 գրության Ձեզ եմ ներկայացնում «Հայջրմուղկոյուղի» ՓԲ ընկերության կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերը վարձակալությամբ փոխանցելու նպատակով անհրաժեշտ միջոցառումներին հավանություն տալու մասին Դաշտադեմ համայնքի ավագնու թիվ 7-Ա և համայնքի ղեկավարի թիվ 4-Ա որոշումները

Առդիր՝ 3 թերթ:

ԴԱՇՏԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ.ԽՌՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԴԱՇՏԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 մայիսի 2016 թվականի N 07-Ա

«ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասով,

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով,

ինչպես նաև համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի «Նոտարական վավերացում չպահանջվող պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» թիվ 1851-Ն որոշման,

Դաշտադեմ համայնքի ավագանին որոշում է՝

1. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը սեփականության իրավունքով անհատույց հանձնել «Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությանը:

2. Գույքի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Դաշտադեմ համայնք,

Գույքի ծածկագիրն է՝ 06-032

Գույքի մակերեսը՝ 3056,394 հա

Գույքի նպատակային նշանակությունը՝ խմելու ջրի ջրատարներ

Հողամասի գործառնական նշանակությունը:

Ավագանու անդամների քվեարկությունը՝

Կողմ՝ Աղայան Աստղիկ Կաչավանի

Քաչակույյան Անժելա Սպարտակի

Քոսյան Մեխակ Գարեգինի

Համայնքի ղեկավար՝ Ս.Խոջոյան

/ստորագրություն/

Կ. Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՇՏԱԴԵՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 13 » մայիսի 2016 թվականի N 04-Ա

Հայաստանի Հանրապետության Ջրային տնտեսության պետական կոմիտեին հատկացված հողամասի հիմքերի վերականգնելու և անշարժ գույքի հասցե տրամադրելու մասին

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 118-րդ հոդվածի 6-րդ կետի, 64-րդ հոդվածի 16-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ և 38-րդ հոդվածների, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 75-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387 որոշման պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ջրային տնտեսության պետական կոմիտեի կողմից տրված հաշվեկշռային արժեքի մասին տեղեկանքը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Վերականգնել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դաշտադեմ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքի սեփականություն համարվող, ջրային տնտեսության պետական կոմիտեին նախկինում հատկացված հողերի հողհատկացման հիմքերը:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի հողհատկացման մակերեսները հիմք ընդունել քարտեզագրողի, գեոդեզիստի, չափագրողի, հողաշինարարի որակավորում ունեցող անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծի տվյալների հիման վրա:

3. Անշարժ գույքին տրամադրել փաստային հասցե՝ Դաշտադեմ համայնք գ.Դաշտադեմ:

Դաշտադեմ համայնքի ղեկավար Մ.Խաչյան

ԴԱՇՏԱԴԵՄԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ * 07 2004 *